# Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Ն Ք

***ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը հոբելյանական տարեդարձերի և բազմամյա գիտամանկավարժական փորձի համար պատվոգրով պարգևատրել է մի խումբ դասախոսների: Ջերմորեն շնորհավորում ենք մեր հոբելյարներին, մաղթում երկար տարիների կյանք, անսպառ եռանդ, ստեղծագործական նորանոր հաջողություններ և ձեռքբերումներ բարձրագույն կրթության և գիտության բնագավառներում:***



*Մարտի 31-ին լրացավ բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, Ժաննա Անաստասյանի 75-ամյակը*



*Մարտի 3-ին լրացավ բնագիտական ֆակուլտետի դասախոս, մ.գ.թ, պրոֆեսոր Ռուդիկ Առաքելյանի 70 - ամյակը*



*Մարտի 31-ին լրացավ բնագիտական ֆակուլտետի դեկան, ք.գ.թ., պրոֆեսոր Վոլոդյա Միրզոյանի 65-ամյակը*



*Մարտի 8-ին լրացավ բանասիրականան ֆակուլտետի գրականության և լրագրության ամբիոնի դասախոս, բ.գ.թ, դոցենտ Սիրուն Բաղդասարյանի 70 - ամյակը*



*Մարտի 25-ին լրացավ պատմության և իրավագիտության ֆակուլտետի պատմության ամբիոնի դասախոս, պ.գ.թ., պրոֆեսոր Արարատ Վարդանյանի 65-ամյակը*



*Մարտի 19-ին լրացավ բանասիրական ֆակուլտետի գրականության և լրագրության ամբիոնի դասախոս, բ.գ.թ., դոցենտ, Զինաիդա Բալայանի 65 - ամյակը*



*Մարտի 30-ին լրացավ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի դեկան, ավագ դասախոս Շահեն Այդինյանի 60-ամյակը*




«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ

Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ

Հրատարակվում է 1994 թվականից

Խմբագիր՝ Զարինե Սառաջյան

Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5: Հեռ.՝ (047) 94 04 91

Տպաքանակ՝ 400

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Իմացի՛ր քո համալսարանի մասին: Այցելի՛ր asu.am կայք: www.asu.am



# ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

*№ 02(216) մարտ, 2019*


## ԿԱՅԱՑԵԼ Է ԱրՊՀ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ. ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ ՆԱԽՈՐԴ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ



***Մարտի 5-ին կայացել է ԱրՊՀ խորհրդի նիստը, որի ընթացքում ներկաները լսել են համալսարանում 2017-2018 ուսումնական տարում կատարված աշխատանքների մասին հաշվետվություն:***

Նիստը վարում էր խորհրդի նախագահ, ԱՀ պետնախարար Գրիգորի Մարտիրոսյանը:

Օրակարգի առաջին հարցը ԱրՊՀ ռեկտորի 2017-2018 ուսումնական տարում կատարած աշխատանքների մասին հաշվետվությունն էր, որը ներկայացրել է ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը: 2017-2018 ուսումնական տարում ԱրՊՀ-ն իր գործունեությունը կազմակերպել և իրականացրել է զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված խնդիրներին և նպատակներին համապատասխան՝ դրա առանցքում որպես գերխնդիր ունենալով կրթության որակի բարձրացումը, համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին ու ունակություններին համարժեք կրթություն ստանալու մատչելիության ապահովումը:

«Չնայած առկա բազմաթիվ խնդիրներին՝ կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում համալսարանը շարունակել է խթանել ուսանողների, դասախոսների մտավոր և անձնային որակների զարգացումը՝ իր նպաստը բերելով նաև երկրի պաշտպանունակության, հանրության տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի բարեկեցության բարձրացմանը»,-մասնավորապես ասել է Ա. Սարգսյանը:

Խոսելով կրթական գործընթացի մասին՝ ռեկտորը նշել է, որ իրականացվել են մասնագիտական կրթական ծրագրերի վերլուծություն և արդիականացում, հաստատվել են նորերը: ՀՀ առաջատար բուհերի հետ համագործակցության հիմնական ուղղություններից մեկը հենց մասնագիտական կրթական ծրագրերի պարբերաբար թարմացումն է:

«ԱրՊՀ հեռահար նպատակը որպես գիտական առաջատար օղակի կայացումն է, կրթական և գիտական գործունեության հավասարակշռումը, ինչը, սակայն, մեր պայմաններում անիրական է. որպես հիմնավորում ուզում եմ նշել 2018թ. նախահաշվում գիտական ծախսերին հատկացված գումարը՝ 2,7 մլն դրամ կամ ընդհանուրի 0,3%-ը: Գիտությունը երիտասարդ կադրերին չի հրապուրում, տնտեսությունից առանձին հետազոտական պատվերներ չենք ստանում, դրանից ստացված համալսարանի եկամուտները շարունակում են մնալ զրոյական, ՀՀ դրամաշնորհային ծրագրերին մեր դասախոսների մասնակցությունը՝ չիրականացված»,-խոսելով գիտական ոլորտում առկա խնդիրներից՝ նշում է ռեկտորը և հավելում, որ, այդուհանդերձ, աշխատանքներ կատարվել են խնդրի լուծման ուղղությամբ: Տարվա ընթացքում ԱրՊՀ-ում կազմակերպվել են դասախոսների և ուսանողների մասնակցությամբ մեկ տասնյակից ավել գիտաժողովներ, տարաբնույթ գիտական քննարկումներ և ընթերցումներ: Համագործակցության բնագավառում ևս համալսարանն արձանագրել է որոշակի հաջողություններ՝ գործընկեր բուհերի թիվը համալրելով նոր անուններով:

Բուհի ղեկավարության ուշադրության կենտրոնում եղել ու մնում են համալսարանականների սոցիալական վիճակի բարելավման հարցերը:

Խորհուրդը ԱրՊՀ ռեկտորի 2017-2018 ուսումնական տարում կատարած աշխատանքը գնահատեց բավարար:

Հաջորդիվ խորհուրդը ի գիտություն է ընդունել ԱրՊՀ 2018թ. ֆինանսական տարվա արդյունքները և հաստատել ԱրՊՀ 2019թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի նախագիծը: Խորհուրդը լսել և հաստատել է «Արցախի պետական համալսարան» ՊՈԱԿ ռազմավարական ծրագիրը (2019-2023թթ.), որը ներկայացրել է ռեկտոր Արմեն Սարգսյանը:

Նիստի ընթացքում Արցախի պետական համալսարանի զարգացման գործում ունեցած զգալի ավանդի համար ԱրՊՀ գիտական խորհրդի որոշմամբ շնորհված «Ոսկե մեդալ» է հանձնվել ԱՀ ազգային վիճակագրության ծառայության նախագահ Մանուշ Մինասյանին, ով բուհը ղեկավարել է 2013-2018 թթ.:

Ողջունելով համալսարանում կատարված արդյունավետ աշխատանքը՝ ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը իր խոսքում կարևորել է կրթության և գիտության հանդեպ ուսանողներին մոտիվացնելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունը:Նախարարը դիպլոմով և պարգևավճարով խրախուսել է «Տարվա լավագույն ուսանող» մրցույթի հանրապետական փուլում հաղթող ճանաչված ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի ֆինանսներ 4-րդ կուրսի ուսանողուհի Դիանա Խաչատրյանին և պատվոգրով ու պարգևավճարով՝ Շուշիի Գյուրջյան կիրառական արվեստի ինստիտուտի դիզայն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Արտաշես Պետրոսյանին՝ «Մասնագիտական ձեռքբերումներ և հասարակական ակտիվություն» անվանակարգում բարձր արդյունքներ ցուցաբերելու համար:

Ամփոփելով նիստը՝ խորհրդի նախագահ Գրիգորի Մարտիրոսյանն ընդգծել է, որ բուհի համար որպես նպատակ սահմանված է կրթության որակի բարձրացումը, և բոլոր գործողությունները պետք է բխեն այդ սկզբունքից:

# ԱրՊՀ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

*Արցախի պետական համալսարանի հարգելի կին դասախոսներ, աշխատակցուհիներ և ուսանողուհիներ.*

*Շնորհավորում եմ Ձեզ՝ Կանանց միջազգային օրվա առթիվ: Այս օրը առիթ է՝ ևս մեկ անգամ արժևորելու և գնահատելու Ձեր ներդրումն ու դերը մեր երկրի զարգացման բոլոր ոլորտներում: Ձեր շնորհիվ աշխարհը դառնում է ավելի բարի և գեղեցիկ: Այսօր հայ կինն իր ինտելեկտուալ բարձր կարողություններով և բնատուր իմաստությամբ կարողանում է իրեն վստահված յուրաքանչյուր աշխատանք պատվով կատարել:*

*Հայ կինը հոգատար մայր է, օջախի պահապան, բարձրակարգ մասնագետ, հավատարիմ ու անդավաճան ընկեր, սիրող քույր, պատերազմի դեպքում՝ քաջ մարտիկ: Մաղթում եմ, որ Ձեր հոգում միշտ տիրի գարնանային տրամադրություն, իսկ ընտանիքում և շրջապատում՝ սեր և ներդաշնակություն:*



# ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

***Մարտի 13-ին ոչ ֆորմալ կրթության ծրագրի շրջանակում ԱրՊՀ-ում դասախոսությամբ հանդես է եկել տ.գ.դ., պրոֆեսոր Թաթուլ Մանասերյանը՝ «ՀՀ տնտեսության մարտահրավերները՝ տնտեսական անվտանգության համատեքստում» թեմայով:***



Ողջունելով ներկաներին՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել Թաթուլ Մանասերյանին՝ ԱրՊՀ այցելելու և արդիական թեմայով դասախոսությամբ հանդես գալու համար, նաև տեղեկացրել, որ այս բանախոսությամբ կրկին մեկնարկում է ոչ ֆորմալ կրթության ծրագիրը ԱրՊՀ-ում:

Կարևորելով տնտեսագիտության դիվանագիտությունը պետության զարգացման գործում՝ բանախոսն անդրադարձել է ՀՀ տնտեսության մարտահրավերներին՝ դրանք դիտարկելով տնտեսական անվտանգության համատեքստում: «Միջին տվյալներով պետությունը մեկ մասնագետ պատրաստելու համար մանկապարտեզից սկսած մինչև բարձրագույն կրթություն ծախսում է մեկ մլն դոլար: Այն պետությունը, որը զլանում է ծախսեր կատարել սեփական մասնագետ պատրաստելու համար, կրկնակի է ծախսելու այլ պետությունից մասնագետ բերելու համար»,-անդրադառնալով որակյալ մասնագետներ պատրաստելու խնդրին՝ նշել է բանախոսը:

Հիմնավորելով բանախոսության թեմայի արդիականությունը՝ Թ. Մանասերյանը նշել է.«Ելնելով մասնագիտական առանձնահատկություններից և այն փորձից, որ ձեռք եմ բերել տարբեր այցելությունների ժամանակ՝ պահանջված է և կարևոր տնտեսական անվտանգության խնդիրներին անդրադառնալը՝ սպառնալիքների գնահատման, դրանց վնասազերծման ուղղությամբ հետևողական աշխատանքներ տանելու համար»:

Նրա խոսքով՝ Արցախը և՛ մարդկային ռեսուրսների առումով, և՛ ինտելեկտուալ կարողությունների նյութականացման առումով կարիք ունի տնտեսագիտական դիվանագիտության գործիքակազմի օգտագործման:

«Սա ոչ միայն գիտություն է, այլ նաև արվեստ է, կարևոր նշանակություն ունի, որովհետև այն, ինչ մենք անվանում ենք Արցախի մրցակցային առավելություններ, շատ դեպքում սահմանափակ շրջանակների կարող է հայտնի լինել, մինչդեռ ամբողջ աշխարհին մենք կարող ենք մատուցել Արցախի տնտեսության բոլոր ճյուղերում ձեռք բերված արդյունքները: Դրա մատուցման լավագույն ձևերից մեկը տնտեսական դիվանագիտությունն է»,-ընդգծել է Թաթուլ Մանասերյանը: Այցի ընթացքում Թաթուլ Մանասերյանը նաև մասնագիտական տասնյակ գրքեր է նվիրել ԱրՊՀ-ին:



# ՍՈՒՄԳԱՅԻԹՅԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉՈՒՆԻ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

***Փետրվարի 28-ին ՄԵՀՁ նախարարության և ԱրՊՀ համատեղ նախաձեռնությամբ Ստեփանակերտի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում կազմակերպվել է միջոցառում, որի ընթացքում հնչել են 1988թ. փետրվարի 27-29-ը Սումգայիթ քաղաքում հայերի հանդեպ կատարված ցեղասպանությունը դատապարտող ելույթներ և ցուցադրվել «Սովորական ցեղասպանություն» ֆիլմը:***

Բացման խոսքով հանդես է եկել ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը. «Սումգայիթում տեղի ունեցածը, պետք է համարել ցեղասպանություն: Հայ ազգի դեմ իրականացրած հանցագործության նպատակն էր կանխել Արցախյան շարժումը՝ ահաբեկելով նոր արյունահեղ գործողությունների հեռանկարով»:

ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ Արմինե Խաչատրյանը նշել է, որ Ադրբեջանը, ի պատասխան արցախահայության արդարացի պահանջի՝ խաղաղ ճանապարհով լուծելու ինքնորոշման հարցը, կիրառեց բիրտ քաղաքականություն՝ ոճրագործություններով, որոնցից մեկն էլ Սումգայիթի արյունալի դեպքերն են:

ԱրՊՀ լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Զարինե Սառաջյանը, ով այդ ջարդերի ականատեսն է, ներկաներին պատմել է իր հիշողություններից. «Ես այդ ժամանակ 4 տարեկան երեխա էի: Ապրում էինք «եղբայրական» Ադրբեջանում՝ շրջապատված ադրբեջանցիներով: Այդ արյունալի իրադարձությունների հետևանքում ես և այնտեղ ապրող իմ հայ հասակակիցներն ունեցանք խեղված մանկություն: Հիշում եմ, որ օրերից մի օր մայրս բոլորիս արգելեց բակ իջնել, ընդհատվեցին բոլոր խաղերը: Գազազած ադրբեջանական ամբոխը թմրանյութերի ազդեցության տակ վխտում էր փողոցում՝ գոռալով, հայ էին փնտրում՝ հոշոտելու»:

# ԳԻՏԱՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ



***ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի ֆինանսահաշվային ամբիոնի դասախոս Արևիկ Ալեքսանյանի նախաձեռնությամբ «Հանրային ֆինանսներ» դասընթացի շրջանակներում կազմակերպվել են գիտաճանաչողական ընթերցումներ՝ «ԱՀ ֆինանսական համակարգ»-ը թեմայով:***

Ֆինանսներ մասնագիտության առաջին կուրսի ուսանողները իրենց ելույթներում ներկայացրել են ԱՀ պետական և համայնքների բյուջեների կառուցվածքը, 10 տարվա կտրվածքով ուսումնասիրել դինամիկան, պետական բյուջեի ելքերը, դեֆիցիտը:

«Գիտաճանաչողական ընթերցումների նպատակն էր, որ ուսանողները հենց առաջին կուրսից կարողանան իրենց ստացած գիտելիքները մշակել, հետաքրքիր ուսումնասիրություններ կատարել»,- ասել է Արևիկ Ալեքսանյանը՝ հավելելով, որ ուսանողները իրենց ուսումնասիրություններում հատկապես ուշադրություն են դարձրել ՀՀ-ից ստացած միջպետական վարկին:

Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Նարինե Ավանեսյանը ողջունել է նման միջոցառումների անցկացումը, գնահատել կատարած ուսումնասիրությունները, նշել, որ այսպիսի միջոցառումների արդյունքում ուսանողները կկարողանան վեր հանել առկա հիմնախնդիրները, կատարել համապատասխան առաջարկություններ այդ հիմնախնդիրների լուծման համար:

# ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ ԱրՊՀ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՓՈՐՁՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

***ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի ֆինանսներ 4-րդ կուրսի ուսանողներն արտադրական փորձուսուցում էին անցնում ԱՀ Ազգային վիճակագրական ծառայությունում: Մարտի 29-ին ԱՎԾ-ում ամփոփվել են փորձուսուցման արդյունքները:***

Ներկայացնելով կառույցի առաքելությունը, գործունեության հիմնական ուղղությունները, կառուցվածքը, առկա խնդիրները՝ ԱՎԾ նախագահը հետաքրքրվել է արտադրական փորձուսուցման ժամանակ ուսանողների ստացած տեղեկություններով, կատարած աշխատանքով:

Ուսանողները կիսել են իրենց տպավորությունները՝ կարևորելով հատկապես իրենց մասնակցությունը կրթական համակարգի հետազոտությանը:

Շնորհակալություն հայտնելով ուսանողներին հետազոտությանը մասնակցելու համար՝ ԱՎԾ նա-



խագահ Մանուշ Մինասյանը նրանց հրավիրել է հետազոտության արդյունքներն ամփոփող զեկույցի շնորհանդեսին:

# ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ՕԼԻՄՊԻԱԴԱ՝ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ԱՌԱՐԿԱՅԻՑ



*Բուհ-դպրոց համագործակցության շրջանակում ԱրՊՀ-ում մաթեմատիկա առարկայից դպրոցականների համար կազմակերպվել է օլիմպիադա, որը նվիրված էր բնագիտական ֆակուլտետի մաթեմատիկայի ամբիոնի պրոֆեսոր Ռուդիկ Առաքելյանի 70-ամյակին:*

ԱրՊՀ ուսումնական գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանը, ողջունելով օլիմպիադայի մասնակիցներին, վստահեցրել է, որ եթե ունենան մաթեմատիկական բազային կրթություն, ապա կարող են աշխատել ցանկացած ոլորտում:

Մաթեմատիկայի ամբիոնի վարիչ, ֆ.մ.գ.թ., դոցենտ Լիանա Աբրահամյանն իր ելույթում արժևորել է Ռուդիկ Առաքելյանի՝ կրթության բնագավառում ունեցած գիտական վաստակը և մանկավարժական գործունեությունը՝ ընդգծելով, որ նա հեղինակ է 30-ից ավելի գիտամեթոդական հոդվածների և 10-ից ավելի դասագրքերի և մեթոդական ձեռնարկների:

Օլիմպիադայում մրցանակային տեղեր զբաղեցրածները պարգևատրվել են պատվոգրերով:

«Հաճելի է նշել, որ առաջին տեղը զբաղեցրած աշակերտի՝ Տիգրան Ավանեսյանի ուսուցիչը ԱրՊՀ շրջանավարտներից է, ով նույնպես սովորում էր մաթեմատիկա մասնագիտությամբ»,-ասել է Լիանա Աբրահամյանը՝ բարձր գնահատելով աշակերտների ակտիվ մասնակցությունն ու ցուցաբերած գիտելիքները մաթեմատիկա առարկայից և հավաստիացրել, որ բուհ-դպրոց համագործակցությունն ամրապնդող նմանատիպ միջոցառումների կազմակերպումը շարունակական կլինի:

# ԿԱՅԱՑԵԼ Է «ՀՈՒՄՈՐԻ ԼԻԳԱ» ՆԱԽԱԳԾԻ ԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹԸ. ԱրՊՀ ԹԻՄՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ Է «ԱՐՑԱԽԻ ԳԱՎԱԹԻ»



*ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության և «FunnyMen Production»-ի համատեղ նախաձեռնությամբ Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում կայացել է «Հումորի լիգա» նախագծի «Արցախի գավաթ» խաղ-մրցույթը:*

Մրցույթին մասնակցել են Արցախի պետական, Մեսրոպ Մաշտոց, Գրիգոր Նարեկացի համալսարանների և Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի ուսանողական թիմերը: Միջոցառմանը հրավիրված էին նաև «Շանթ» հեռուստաընկերության «Հումորի լիգա» նախագծի «Ջվերապոլիս», «Հեթ-Տրիկ» և «Գոլֆ երեք» թիմերը: Ժյուրիի որոշմամբ «Արցախի գավաթ» մրցանակը տրվել է Արցախի պետական և Գրիգոր Նարեկացի համալսարաններին:

Միջոցառման վերջում «Հումորի լիգա»-ի տնօրեն Արամ Մելիքյանը, գոհունակություն հայտնելով բոլոր թիմերի հումորային ներկայացումներից, տեղեկացրել է, որ «Արցախի գավաթ» մրցույթի չորս թիմերին էլ իրավունք է տրվում մասնակցելու Հայաստանում կայանալիք «Հումորի լիգա»-ի խաղերին:

Միջոցառմանը ներկա էին նաև ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության պատասխանատուներ, թիմերի երկրպագուներ:





# «ԱՐՑԱԽԻ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ ՀԱՄԱԴՐՎԱԾ ԵՆ ԳԵՂԵՑԻԿՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆԸ». ԴԱՎԻԹ ՄՈՒՐԱԴՅԱՆ



*Ոչ ֆորմալ կրթության ծրագրի շրջանակում մարտի 20-ին ԱրՊՀ-ում դասախոսությամբ հանդես է եկել ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Դավիթ Մուրադյանը:*

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել բանախոսին ԱրՊՀ-ում դասախոսությամբ հանդես գալու համար՝ կարևորելով նման ձևաչափով հանդիպումների ընթացքում ուսանողներին գիտելիք տալու արդյունավետությունը և նշել, որ ծրագիրը շարունակական բնույթ է ունենալու:

«Մշակույթի զարգացման միտումները» թեմայով դասախոսության ընթացքում Դ. Մուրադյանն ընդգծել է մշակույթի դերը ազգային ինքնության պահպանման գործում՝ նշելով, որ որքան մեծ է մշակութային էլիպսը, այնքան ընդարձակվում են հայրենիքի սահմանները և տարածվում ֆիզիկական սահմաններից դուրս: Նրա խոսքով՝ նոր սերունդը, որը ապագան կերտողն է, պետք է ճանաչի իր հայրենիքը, իսկ հայրենիքը միայն նյութական տարածքը չէ, այլ նաև մայրենի լեզուն, մշակույթը: Մշակույթը և միասնական լեզուն կենտրոնախույս ուժերին կարող են աստիճանաբար դարձնել կենտրոնաձիգ: Կարևորելով մշակույթի դերը մարդկային քաղաքակրթության զարգացման մեջ՝ բանախոսը հատկանշում է, որ բնության մեջ միակ արարածը մարդն է, որը չի բավարարվում եղած իրականությամբ և ստեղծում է նոր իրականություն՝ պոեզիա, երաժշտություն, գեղանկարչություն, ասել է թե՝ հոգու իրականություն, որը մարդուն դարձնում է ավելի լավը, քան նա կա:

«Արցախն այն վայրն է, որն ունի իսկայական պատմամշակութային անցյալ և կենսագրություն. այս միջավայրն ունի իր խորհուրդը: Մշակույթը աննյութեղեն է, և ես միշտ ասել եմ, որ Արցախյան գոյամարտի ժամանակ հաղթողը ոչ միայն զինվորն ու աշխատավորն են եղել, այլև Մատենադարանի շենքը, Գանձասարի վանքը, «Ռանչպարների կանչ»-ը և այլն: Պայքարի է գնացել այն սերունդը, որը դաստիարակված էր այդ արժեքներով: Մշակույթը մարդու և ազգերի ճակատագրական պահերին ամրապնդում է ազգային ինքնագիտակցության և բարոյական դիմադրողականությունը»,-նշել է Դ. Մուրադյանը՝ ընդծելով, որ Արցախը ճակատագրով մշակութային աուրայի մեջ է, և Արցախի մշակույթում զարմանալիորեն համադրված են գեղեցիկն ու ազգայինը: Հայկական մշակույթը պատմության կողմից զարկված ժողովրդին դարձրեց պատմության հետ քայլող ժողովուրդ:

# ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՍ Է ԵԿԵԼ ԼԵՎՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՅԱՆԸ



*Ոչ ֆորմալ կրթության ծրագրի շրջանակում մարտի 20-ին ԱրՊՀ-ում դասախոսությամբ հանդես է եկել կ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի էթնոգենոմիկայի լաբորատորիայի վարիչ Լևոն Եպիսկոպոսյանը:*

Կարևորելով կրթական այլընտրանքային հարթակի աշխատանքների վերսկսումը՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը ողջունել է բանախոսի այցն Արցախի մայր բուհ՝ նշելով, որ ծրագրի շրջանակներում նախատեսվում են բանախոսություններ տարբեր բնագավառի մասնագետների ներգրավմամբ:

«Իմ նեանդերթալյան մեծ տատիկը» թեմայով դասախոսության ընթացքում բանախոսի կողմից ներկայացվել են նեանդերթալյան և բանական մարդու ֆիզիկական և մտավոր ընդհանրություններն ու տարբերությունները:

«Գենետիկ շփումների և էվոլյուցիոն մրցակցության արդյունքում ի հայտ են եկել արտաքին և ներքին հատկանիշների փոփոխություններ, ինչպիսիք են մաշկի գույնը, խոսելու ունակությունը, ադապտատիվ ռեցեպտորները և այլն, որոնք մենք ժառանգություն ենք ստացել ոչ թե մեր նեանդերթալյան պապից, այլև տատից»,- ասել է Լ.Եպիսկոպոսյանը:

# ՊՐԱԿՏԻԿ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ



***Մարտի 11-ից ՀՀ-ից հրավիրված պրակտիկ հոգեբան Արմինե Ադամյանի կողմից ԱրՊՀ հոգեբանական կենտրոնում անց են կացվել դասընթացներ և թրեյնինգներ, որոնք նախատեսված են եղել ԱրՊՀ ուսանողների և հոգեբանության խնդիրներով հետաքրքրված մասնագետների համար:***

Հնգօրյա պրակտիկ դասընթացների ընթացքում նա ներկայացրել է «Կառավարման հոգեբանություն», «Հոգեթերապիա», «Մանկական թերապիա», «Արտթերապիա», «Այցելուների հետ աշխատանքի հմտություններ», «Կոնֆլիկտների կառավարում», «Այցելուների հետ աշխատանք» թեմաները:

ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր, հ.գ.թ. Վիտյա Յարամիշյանի խոսքով, յուրաքանչյուր օրվա երկրորդ կեսին թրեյնինգներ են անցկացվել նաև կրթության ոլորտի մասնագետների համար՝ դպրոցների տնօրենների, տնօրենների՝ մասնագիտական կողմնորոշման աշխատանքների գծով տեղակալների, դպրոցների հոգեբանների, հատուկ և սոցիալական մանկավարժների, ինչպես նաև ԱրՊՀ «Հոգեբանություն» մասնագիտությամբ շրջանավարտների համար: Այս դասընթացները վարել են ինչպես ՀՀ-ից հրավիրված, այնպես էլ ԱրՊՀ հոգեբանական կենտրոնում ներգրավված հոգեբան մասնագետները:

# ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ-ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ «ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՉԱՓՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ



***Մարտի 1-ին ԱրՊՀ-ում կայացել է դասախոսություն-քննարկում՝ «Հանրային կարծիքի ուսումնասիրության կարևորությունն ու չափման մեթոդները» թեմայով, որը վարել է «Breavis» խորհրդատվական ընկերության հետազոտությունների բաժնի ղեկավար Համբիկ Առաքելյանը:***

Համբիկ Առաքելյանը, կարևորելով նման դասընթացների հաճախակի կազմակերպումը, ընդգծել է տվյալ ոլորտի վերաբերյալ ունեցած տեսական գիտելիքների պրակտիկ կիրառման անհրաժեշտությունը: «Ուսանողները, որպես կանոն, միայն տեսական գիտելիքներ են ունենում և պրակտիկ դաշտում այդ ամենը կիրառելու համար անգամ տեսլականը չի տրվում: Տարիների փորձ ունեցող ընկերությունների համապատասխան մասնագետները նման հանդիպումների միջոցով կարողանում են ուղղորդել մասնակիցներին, թե ինչպես կարող են նրանք օգտագործել ձեռք բերած տեսական գիտելիքները»,- ասել է նա՝ նշելով, որ թեմայի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ այն ներառում է անհրաժեշտ բոլոր ներածական բաղադրիչները, որոնց միջոցով կարող են պատկերացում կազմել հանրային կարծիքի և սոցիոլոգիական հետազոտությունների մասին:





# ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ



***Արցախի գիտական կենտրոնի և ԱրՊՀ գիտական խորհուրդների երաշխավորությամբ օրերս լույս են տեսել ԱրՊՀ ռեկտոր, բ.գ.թ., դոցենտ Արմեն Սարգսյանի «Մատենագիտություն Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության» և «Մատենագիտություն Արցախի բանահյուսության գրառման և ուսումնասիրության» աշխատությունները:***

«Մատենագիտություն Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության» աշխատությունը նվիրված է Ղարաբաղի բարբառին, նրա ենթաբարբառներին ու խոսվածքներին վերաբերող և առնչվող տպագիր ու ձեռագիր աշխատությունների, բառարանների, հոդվածների մատենագիտությանը: Յուրաքանչյուր նյութի վերնագրից և այլ տեղեկություններից հետո ներկայացվում է նրա հնարավորինս ամփոփ նկարագիրը: Ընդարձակ առաջաբանում քննության են առնվում բարբառի ուսումնասիրության համառոտ պատմությունը՝ ըստ ժամանակագրության, և հնչյունաբառաքերականական օրինաչափությունները:

«Մատենագիտություն Արցախի բանահյուսության գրառման և ուսումնասիրության» աշխատությունը նվիրված է Արցախի բանահյուսությանը վերաբերող և առնչվող տպագիր ու ձեռագիր ժողովածուների, աշխատությունների, հոդվածների մատենագիտությանը: Ընդարձակ առաջաբանում քննության են առնվում Արցախի բանահյուսության գրառման և ուսումնասիրության համառոտ պատմությունը՝ ըստ ժամանակագրության, կենցաղավարման արդի վիճակը և ժանրային ու իմաստային առանձնահատկությունները:

Նշենք, որ աշխատանքն իրականացվել է ԱՀ ԿԳՍՆ կողմից տրամադրված ֆինանսական աջակցության շնորհիվ՝ գիտական թեմայի շրջանակում:

# ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ Է ԳՐՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ



***Մարտի 15-ին ԱրՊՀ փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ, փ.գ.թ., դոցենտ Աննա Հակոբյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է Սիմոնա դը Բովուարի «Երկրորդ սեռ» գրքի քննարկումը:***

Նախքան քննարկմանն անցնելը՝ Աննա Հակոբյանն ընդգծել է ոչ միայն գրքի փիլիսոփայական-հեղափոխական արժեքը, այլև հատկանշել հիմնարար մի քանի պատճառ, որոնցով և հիմնավորել է այն քննարկման ներկայացնելու անհրաժեշտությունը:

«Մեր օրերում կնոջ դերի իմաստավորման պահանջը անխուսափելի է: Անուրանալի է կնոջ ունեցած դերը սոցիալական, հասարակական, քաղաքական ոլորտներում, որը գալիս է դեռևս անտիկ ժամանակաշրջանից: «Երկրորդ սեռ» գիրքը չափանիշ կարող է համարվել այն առումով, որ լուրջ ազդեցություն է թողնում մարդու գիտակցության վրա՝ այն հասցնելով նոր մակարդակի»,- նշել է Ա. Հակոբյանը և հավելել, որ գիրքը թեպետ շատ դեպքերում համարվում է ֆեմինիստական հայացքների դրսևորում, բայց այն մեծապես ունի էքզիստենցիալիստական հենք:

Մագիստրանտների ներգրավմամբ կազմակերպված գիտական վերլուծություն-քննարկումների միջոցով ներկա դասախոսներն ու ուսանողները գրքի բովանդակության, էության և արդիականության վերաբերյալ ներկայացրել են իրենց տեսակետները, գնահատել արժեքը և մտքեր փոխանակել մեր օրերում կնոջ իրավունքների շուրջ:

# ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ՝ ՈՒՀՏԱ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԲԱԺՆԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ

*ԱրՊՀ-ում կազմակերպվել են «Կառուցի՛ր քո հաջողակ կարիերան» և «Հարցազրույցին մասնակցելու ունակություններ» թեմաներով դասընթացները, որոնք վարել են Հայաստանի ամերիկյան համալսարանի փորձագետներ Նանա Հովհաննիսյանը և Արտակ Ալոյանը: Դասընթացների կազմակերպման նախաձեռնությունը ԱրՊՀ ՈՒՀՏԱ և կարիերայի բաժնինն է:*



«Դասընթացը մասնակիցներին հնարավորություն է տալիս քննարկելու և ձեռք բերելու աշխատաշուկայի համար այն հմտությունները, որոնք ակնկալում են գործատուները: Դասընթացը ներկայացնում է աշխատանքի տեղավորման հիմնական բաղադրիչները, թե ինչպես ձևավորել և զարգացնել ուժեղ պրոֆիլ և ներկայանալ աշխատաշուկայում»,- ասել է Նանա Հովհաննիսյանը` վստահեցնելով, որ այն օգտակար կլինի սկսնակ մասնագետների համար:

Կարևորելով հարցազրույցին մասնակցելու ունակությունները, դրանց նրբություններին տիրապետելու անհրաժեշտությունը ժամանակակից աշխարհում` Արտակ Ալոյանը նշել է. «Դասընթացը հաղորդակցային է և կենտրոնացած է մասնակցի ներուժային հմտությունների բացահայտման վրա, որի մեծ մասը կկազմի գործնական առաջադրանքներ, քննարկումներ և ձեռքբերված հմտությունների կիրառման սցենարներ»:

# ԱրՊՀ-Ն ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆՈՐ ԿԱԶՄ ՈՒՆԻ



*Մարտի 19-ին կայացած ԱրՊՀ արհեստակցական միության ընդլայնված նիստում քննարկվել են նախորդ տարվա աշխատանքները, ընտրել միության նոր կազմ և նախագահ:*

Ներկաները նախ լսել են ԱրՊՀ արհեստակցական միության 2018 թվականի և վերստուգիչ հանձնաժողովի կատարած աշխատանքների մասին հաշվետվությունները, գնահատել այն բավարար: Արհմիության նախագահ Արկադի Բարսեղյանը նախորդ տարում կատարված աշխատանքների մասին խոսելիս նկատել է, որ կոմիտեի ուշադրության կենտրոնում եղել և մնում է անհատը:

Արհմիության աշխատանքների վերաբերյալ ելույթներ ունեցողները շեշտել են վերջին շրջանում միությունից առաջացած դժգոհությունները ու դրա արդյունքում միության շարքերը լքողների քանակի կտրուկ աճը:

Ի՞նչ անել, որպեսզի կազմակերպությունը ծառայի իր նպատակին. այս հարցի շուրջ էին դիտարկումներն ու առաջարկությունները: «Ժամանակի պահանջներին համահունչ աշխատելաոճ, որի հիմքում պետք է լինի թափանցիկությունը»,- առաջարկել է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանը: Իսկ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի դեկան Շահեն Այդինյանը հորդորել է ցանկություններին զուգահեռ հաշվի առնել նաև հնարավորությունները և ստեղծել սոցիալական մի մոդել, որի պայմաններում արհմիության շարքերում լինելը օրինաչափ կլինի:

Քննարկման արդյունքում միաձայն հաստատվել է արհմիության նոր` ինը հոգանոց կազմ` Կարեն Մեժլումյանի նախագահությամբ:

# ԲՈՒՀ-ԳՈՐԾԱՏՈՒ ՆՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵԶՐԵՐ

*Մարտի 19-ին ԱրՊՀ ռեկտորն ընդունել է «Ղարաբաղ տելեկոմ» ՓԲԸ ներկայացուցիչներին: Հանդիպմանը քննարկվել են համագործակցությանն առնչվող հարցեր:*

ԱրՊՀ ռեկտորը նշել է, որ կարևորելով բուհ-գործատու հարաբերությունների ամրապնդումը` առանցքային է համարում գործատուների հետ տարվող աշխատանքները, որի արդյունքը ոչ միայն շրջանավարտների համար աշխատատեղեր ապահովելը կլինի, այլ նաև համատեղ քննարկումները: Հանդիպմանը մասնակցում էին «Ղարաբաղ տելեկոմ» ՓԲԸ պատասխանատուներ, ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի ղեկավարությունը:

Ռեկտորն առաջարկել է նաև «Ղարաբաղ տելեկոմ»-ի մասնագետներին ընդգրկել ԱրՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ուղղությամբ ամփոփիչ ատեստավորման քննությունների հանձնաժողովների կազմում, որն էլ հիմք կհանդիսանա գործատուների համար լավագույն շրջանավարտներին աշխատանքի ընդունելու հարցում:

«Ղարաբաղ տելեկոմ» ՓԲԸ մարդկային ռեսուրսների կառավարման և SS ոլորտի պատասխանատուներ Էլմիրա Սարգսյանն ու Նվեր Բաղդասարյանը պատրաստակամություն են հայտնել բուհի հետ համագործակցության խորացմանն ուղղված քայլերն ամրապնդելու համար:



# ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 140-ԱՄՅԱԿԻՆ

*Մարտի 20-ին ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետում հայագիտական կենտրոնի և պատմության ամբիոնի համատեղ նախաձեռնությամբ կազմակերպվել է ուսանողական գիտաժողով՝ նվիրված Արամ Մանուկյանի ծննդյան 140-ամյակին: Ներկա էին պատմության ամբիոնի դասախոսներ և ուսանողներ:*

Ֆակուլտետի դեկան Արմինե Խաչատրյանը, ողջունելով գիտաժողովի ներկաներին, նշել է, որ Արամ Մանուկյանը նորագույն շրջանի հայ քաղաքական մտքի ամենակարկառուն ներկայացուցիչն է: Նա նպատակասլաց էր ու հետևողական և հայ քաղաքական գործիչների մեջ առաջիններից էր, որ հասկացավ` հայն իր պայքարում պետք է հույսը դնի բացառապես իր ուժերի, ազգային ինքնակազմակերպման վրա: Գիտաժողովին մասնակցում էին պատմություն մասնագիտությամբ սովորող ուսանողները, որոնք իրենց ելույթներում անդրադարձել են Արամ Մանուկյանի կյանքին, գործունեությանը` կարևորելով նրա ունեցած դերը մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրման գործում:

# ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆԸ



*Մարտի 11-ին ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ Արմինե Խաչատրյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է ուսանողական գիտաժողով՝ նվիրված արցախյան հիմնահարցին ու պետականության հռչակմանը: Ներկա էին պրոռեկտորներ, պատմության ամբիոնի դասախոսներ:*

Արմինե Խաչատրյանը, ողջունելով գիտաժողովի ներկաներին, նշել է, որ ուսանողական գիտաժողովի նպատակն է քննարկել արցախյան հիմնախնդիրը պատմական, իրավական և քաղաքական ասպեկտներով և նշել է, որ այս գիտաժողովը հետագա քննարկման առաջին փուլն է: Գիտաժողովին մասնակցում էին պատմության և իրավագիտության մասնագիտություններով սովորող ուսանողներ, որոնք իրենց ելույթներում ներկայացրել են արցախյան հիմնախնդրի աշխարհաքաղաքական գործոնները, կամավորական ջոկատների դերը արցախյան շարժման գործընթացում` անդրադառնալով նաև ԼՂԻՄ-ի տարածքային կորուստներին և պայքարին Ադրբեջանի կազմից դուրս գալու նպատակով: Գիտաժողովի վերջում պրոռեկտորները, կարևորելով գիտաժողովի անցկացումը, քննարկել են ելույթները:

# ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԽԹԱՆՈՒՄԸ ԵՐԿԻՐԸ ՃԱՆԱՉԵԼԻ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ Է. ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԱրՊՀ-ՈՒՄ

*Մարտի 15-ին ԱրՊՀ-ում հյուրընկալվել և ուսանողների հետ հանդիպում է ունեցել «Vartanush Grandma» զբոսաշրջային գործակալության հիմնադիր Ամալյա Ակոպովան:*



Հայկական արմատներով ռուսաստանաբնակ հյուրը խոսել է ընկերությունը ստեղծելու գաղափարի մասին` նշելով, որ այն կյանքի կոչելուն նպաստել է հեռուստատեսային ոլորտում ունեցած իր փորձառությունը: 2012 թվականին առաջին անգամ Հայաստանում լինելուց հետո Ամալյան որոշեց հեռուստատեսային կոնտենտների փոխարեն պլանավորել մարդկանց ժամանակն ու ժամանցը և հիմնեց «Vartanush Grandma», իսկ թե ինչու հենց դեպի Հայաստան և ինչու «Վարդանուշ տատիկ», բանախոսը բացահայտում է. «Ցանկացած արտադրանքի վաճառքը կարելի է խթանել ճիշտ փաթեթավորմամբ, այս դեպքում փաթեթավորումը Վարդանուշ տատիկի մասին հյուսված լեգենդն է»:

Բանախոսը ներկաների հետ զրույցի ձևաչափով փորձել է առանձնացնել Արցախի զբոսաշրջային առանձնահատկությունները` միաժամանակ սովորեցնելով, թե ինչպես կարելի է դրանց կիրառմամբ ներգրավել առավելագույն զբոսաշրջիկների և երկիրը դարձնել առավելճանաչելի:

# ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ

*ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի նախաձեռնությամբ անց են կացվել դասընթացներ՝ Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցների պատասխանատուների համար:*



Մարտի 12-ին կայացած հանդիպման ընթացքում ՀՀ-ից հրավիրված պրակտիկ հոգեբան Արմինե Ադամյանը, ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, մանկավարժության և սպորտի ֆակուլտետի դեկան Շահեն Այդինյանը տնօրենների և ուսմասվարների հետ քննարկել են կրթության ժամանակակից հիմնախնդիրները:

«Դասընթացի նպատակն էր ներդաշնակեցնել դպրոցում, բուհում իրականացվող աշխատանքները, նպաստել կրթության որակի բարելավմանը, քննարկել որոշ նորահայտ խնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն»,- ասել է ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը:

Մարտի 13-ին կայացած հանդիպմանը մասնակցում էին դպրոցների տնօրենների՝ մասնագիտական կողմնորոշման աշխատանքների գծով պատասխանատուները: Հանդիպումը վարում էր ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վ. Յարամիշյանը:

Հանդիպման ընթացքում նա անդրադարձել է մանկավարժական և հոգեբանական աշխատանքի բովանդակությանն ու կազմակերպմանը՝ նշելով, որ, լինելով նույն շղթայի տարբեր օղակներ, համալսարանն ու դպրոցը պետք է հստակեցնեն ձեռքբերումներն ու անելիքները:

Ներկաների հետ թեմայի շուրջ զրույցներ են վարել նաև բ.գ.թ., նյարդաբան Ավետիս Ավետիսյանն ու ՀԱԵ Արցախի թեմի լուսարարապետի պաշտոնակատար Հրայր սարկավագ Հակոբյանը:

# ԲՈՒՀ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ ԴՊՐՈՑՈՒՄ

*ԱրՊՀ հոգեբանական կենտրոնը բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողների (փորձուսուցման մանկավարժ-հոգեբան Ժ. Սարգսյան) և Խ. Աբովյանի անվան համար 1 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտների մասնակցությամբ կազմակերպել է միջոցառում՝ «Մի քիչ հոգեբանությունից» խորագրով:*



Ուսանողներն աշակերտներին մատչելի ձևով ներկայացրել են հոգեբանության ծագման պատմությունը, թե ինչ է հոգեբանությունը՝ որպես գիտություն և նրա անհրաժեշտությունը մարդու կյանքում: Միջոցառումն ուներ նաև գեղարվեստական մաս. մասնակիցները հանդես են եկել պարով, ասմունքով: Միջոցառմանը ներկա էին դպրոցի տնօրեն Ժ. Բալայանը, բանասիրական ֆակուլտետի դեկան Լ. Մարգարյանը, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Ն. Առաքելյանը, փորձուսուցման ղեկավար Ի. Հակոբյանը, ուսուցիչներ, աշակերտներ:

# ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԱՄԱՍ

*Մարտի 9-ին բանասիրական ֆակուլտետի ՈւԽ նախաձեռնությամբ մի խումբ ուսանողներ այցելել են N զորամաս: Զինվորների ուղեկցությամբ նրանք շրջայց են կատարել զորամասում, ծանոթացել զինծառայողների առօրյային:*



Զինվորների ժամանցը հետաքրքիր դարձնելու համար ուսանողների կողմից կազմակերպվել է ինտելեկտուալ խաղ-մրցույթ: Այնուհետև ուսանողները զինվորներին են հանձնել շնորհակալական նամակներ և ծանրոցներ:

«Նման ծրագրերով մենք փորձում ենք մշտապես ուշադրության կենտրոնում պահել զինվորներին: Այսպիսի այցերով նպատակ ունենք ամրապնդել բանակ-հասարակություն կապը, ինչպես նաև երիտասարդության շրջանում բարձրացնել ռազմահայրենասիրական ոգին: Այսպիսով նաև մենք մեր շնորհակալությունն ենք հայտնում զինվորներին ու սպայական կազմին իրենց անձնվեր ծառայության համար»,- նշել է բանասիրական ֆակուլտետի ՈՒԽ նախագահ Լիլիթ Մարգարյանը:



# ԱրՊՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ Է ԱՆՑԿԱՑՐԵԼ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

*Այս օրերին ԱրՊՀ որակի ապահովման կենտրոնը աշխատաժողով է անցկացրել ԱրՊՀ բոլոր ֆակուլտետների ուսանողների հետ: Աշխատաժողովը վարել է կենտրոնի վարիչ Հասմիկ Մինասյանը:*



Մեզ հետ ունեցած զրույցի ընթացքում Հ. Մինասյանը կարևորել է աշխատաժողովի նշանակությունը՝ որպես համալսարանի գործունեության բարելավմանն ուղղված քայլերից մեկը: Ուսանողների հետ քննարկումն ու նրանց տրամադրվող տեղեկությունը այնպիսի թեմաների շուրջ է, ինչպիսիք են կրեդիտային համակարգը, մասնագիտական կրթական ծրագրերը, ուսանողի ծանրաբեռնվածությունը, ուսանողի դերը համալսարանում որակի ապահովման մեխանիզմների ներդրման գործում և հարակից այլ հարցեր:

«Ընդհանրապես ուսանողը պետք է իմանա իր պարտականություններն ու իրավունքները: Համաձայն համալսարանի որդեգրած ուսանողամետ քաղաքականության՝ ուսանողը պետք է ներգրավված լինի համալսարանում իրականացվող բոլոր գործընթացներում: Ուստի կարևորում եմ աշխատաժողովի նշանակությունը՝ իրականացվող գործընթացների վերաբերյալ ուսանողների տեղեկացվածության աստիճանը բարձրացնելու ուղղությամբ»,-նշել է Հասմիկ Մինասյանը:

# ԱրՊՀ-ՈՒՄ ԿՅԱՆՔԻ Է ԿՈՉՎԵԼ «ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՐՑԱԽՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ



*ԱրՊՀ-ում կյանքի է կոչվել «Կենսաբանության արդիականացումն Արցախում» ծրագիրը, որի շրջանակում ստեղծվել է ժամանակակից նորարար տեխնոլոգիաներով հագեցած լաբորատոր բազա՝ տեղում բարձր մակարդակով ուսումնագիտական գործընթացների իրականացման նպատակով:*

Ծրագրի գիտական ղեկավար, կ.գ.դ. Հասմիկ Գալստյանի խոսքով՝ լաբորատորիան համալրվել է անհրաժեշտ բոլոր սարքավորումներով, ինչը հնարավորություն է ընձեռում կատարել հետազոտություններ:

«Մինչ այժմ ԱրՊՀ-ում կենսաբանության ուղղությամբ նյութատեխնիկական բազայի լուրջ խնդիր կար, ինչը բացասաբար էր անդրադառնում դասընթացի իրականացման արդյունավետության վրա: Լաբորատորիան լրացրել է այս բացը և կարևոր նշանակություն ունի հատկապես մագիստրատուրայի ուսանողների համար: Ուսանողներն այստեղ կարողանում են ձեռք բերել տեսական և գործնական գիտելիքներ, կատարել հետազոտություններ», -ասում է Հ. Գալստյանը՝ հավելելով, որ լաբորատորիան հնարավորություններ կտա Արցախում արդիականացնել կենսաբանական գիտությունները նոր սերնդի համար՝ դրանով իսկ նպաստելով կրթության որակի բարձրացմանը:

Ծրագրի կյանքի կոչումը նաև ԱրՊՀ զարգացման ծրագրի մի օղակ է, որի արդյունքում կպատրաստվեն բարձր որակավորում ունեցող մասնագետներ առողջապահական, գյուղատնտեսական, բնապահպանական և սննդի կենսատեխնոլոգիաների ուղղություններով:

Խոսելով ծրագրի արդյունավետության մասին՝ լաբորատորիայի պատասխանատուն նշում է, որ ստեղծված լաբորատորիայում ինչպես ուսանողների, այնպես էլ շահագրգիռ անձանց կողմից կկազմակերպվեն հետազոտական աշխատանքներ, պատվիրատուներին կմատուցվեն ծառայություններ՝ փորձանմուշների ուսումնասիրության, հետազոտական վերլուծությունների ուղղությամբ, կտրվի մասնագիտական խորհրդատվություն:

«Ծրագրի նպատակն էր ստեղծել ԱրՊՀ կենսաբանության լաբորատորիա՝ զինված արդի սարքավորումներով, ինչը նպատակաուղղված է ԱրՊՀ ուսանողների գործնական հմտությունների կատարելագործմանը, աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանը: Արդյունքում կբարձրանան ուսուցման որակը և որակյալ մասնագիտական անձնակազմի թվաքանակն այս ոլորտում, կխրախուսվի գիտության և հետազոտության ինտեգրումը համալսարանում, ինչը կհանգեցնի որակի անընդմեջ բարելավմանը, կզարգանա կենսաբանության ուսուցումն Արցախում»,-նշել է ծրագրի ղեկավարը և շնորհակալություն հայտնել ծրագրի իրականացմանը նպաստած և լաբորատորիան տեխնիկապես համալրելու գործում աջակցած, մասնագիտական օժանդակություն ցուցաբերած բոլոր անձանց և ընկերություններին: